«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր
_____Պ.Ս. Ավետիսյան
«22» հունիսի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Լևոնի Բաբոյանի «Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման կատարելագործման ուղիները (ՀՀ նյութերով)» ատենախոսության վերաբերյալ, ներկայացված՝ Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի Էկոնոմիկայի և ֆինանսների ու Կառավարման և բիզնեսի ամբիոնների 2023 թվականի հունիսի 22-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 07-23):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Պետրոսյան Մարտիրոս Երվանդի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Թորոսյան Թորոս Շահենի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հանիսյան Հրայր Հովիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ավետիսյան Լարիսա Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Լալայան Վահագն Ստեփանի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Խաչատրյան Հովակիմ Խաչիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Անուշ Արմենի**՝ դասախոս, **Սուվարյան Արզիկ Միքայելի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Կառավարման և բիզնեսի ամբիոնի վարիչ, **Աբրահամյան Վահրամ Գևորգի**՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Մոմջյան Մարիամ Բաբկենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Բաբայան Կարինե Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գինոսյան Քրիստինե Հայկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սահակյան Մարիա Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ավետյան Արման Ալեքսանդրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

COVID -19 համավարակը իր բաղացասական ազդեցությունն է թողել ինչպես ֆինանսական համակարգի, այնպես էլ իրական հատվածի առևտրային կազմակերպությունների ֆինանսական վիճակի վրա: Ուստի, ճգնաժամի հաղթահարման համար ֆինանսական կառավարման համակարգում նոր լուծումների մշակումը և գործնականում դրանց կիրառումը ունի կենսական նշանակություն:

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման հիմնադրույթներին համապատասխան առանցքային նշանակություն ունեն կապիտալի կառուցվածքի ձևավորման, նախընտրելի կառուցվածքի հիմնավորման և որպես նորովի լուծումներ՝ նաև կանխատեսման հիմնահարցերը: Մասնագիտական գրականության մեջ և ֆինանսական կառավարման գործնականում կիրառվող մոտեցումներում դեռևս բացակայում են կապիտալի կառուցվածքի արդյունավետ վերահսկողության, նախընտրելի կառուցվածքի որոշման չափանիշները: Հիմնականում շեշտադրվում են կապիտալի միջին կշռված արժեքի նվազեցման, շահութաբերությունը առավելագույնի հասցնելու, ֆինանսական ռիսկերը հնարավորինս նվազեցնելու մոտեցումները:

Արևմտյան որոշ տնտեսագետ հետազոտողներից մոտ կազմակերպության կապիտալի կառուցվածքի ձևավորման գործընթացում հատուկ դեր է հատկացվում ֆինանսական լծակի արդյունավետությանը, ինչը հնարավորինս լավ արդյունքներ է ապահովում ֆինանսական կատարյալ շուկայի պայմաններում: Ֆինանսական շուկայի ոչ լիարժեք արդյունավետ գործելու պայմաններում առևտրային կազմակերպությունները կապիտալի ձևավորման գործընթացում իրենց ռազմավարական խնդիրները տանում են դեպի բանկային համակարգ, ինչն էլ վարկերի բարձր տոկոսադրույքների պայմաններում առաջ է բերում ֆինանսական վիճակը վատթարացնող բազում խնդիրներ:

Թվային տեխնոլոգիաների կիրառմանը համահունչ ֆինանսական կառավարման ոլորտում կանխատեսող ուսուցանման մոդելների մշակումն առավել արդյունավետ կդարձնի ակտիվների և պասիվների նախընտրելի կառուցվածքի ձևավորումը՝ այն մշտական կապի մեջ դիտարկելով ֆինանսական շուկայում առաջարկվող ռեսուրսների գնից: Միաժամանակ, վճարունակության վերականգման իրենց բնույթով նոր լուծումները խիստ կարևոր են հայրենական առևտրային կազմակերպությունների համար իրենց մրցակցային դիրքերը ԵԱՏՄ անդամ պետությունների կազմակերպությունների նկատմամբ վերականագնելու և առավելություններ ստանալու առումով:

Ֆինանսական կառավարման հիմնախնդիրը ժամանակի ցանկացած փուլում գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում և պարբերաբար ստացել է նոր լուծումներ: Ամենակարևոր իրողությունն այն է, որ այս հիմնախնդրով զբաղված մի շարք հետազոտողներ՝ Հ. Սիմոնը, Դ. Տոբինը, Ու. Շարն, Ֆ. Մոդիլյանին, Մ.

Միլլերը դարձել են տնտեսագիտության ոլորտում Նոբելյան դափնեկիրներ: Արտերկրյա հետազոտողների ֆինանսական կառավարման հիմնախնդիրներին նվիրված մեծ թվով մասնագիտական բնույթի աշխատություններում քննարկվել են ֆինանսական կառավարման հիմնարար դրույթների կատարելագործման առանցքային հարցերը:

Հայ հետազոտողներից ֆինանսական կառավարման տարաբնույթ ուղղվածության հիմնախնդիրներին իրենց հետազոտություններում անդրադարձել են Է. Սանդոյանը, Լ. Բաղանյանը, Ա. Սարգսյանը, Ա. Բայադյանը, Ա. Ճյուղուրյանը, Ա. Սալնազարյանը, Վ. Հարությունյանը, Ս. Սուքիասյանը, Ա. Մաթևոսյանը, Ս.Թորոսյանը, Գ. Մանուկյանը, Լ.Հարությունյանը, Ա.Միրզոյանը, Վ.Սարգսյանը, Ա.Հակոբյանը և այլոք:

Այնուամենայնիվ ներկա փուլում, պայմանավորված համավարակային ճգնաժամով, Արցախյան և ռուս-ուկրաինական հակամարտության բացասական եզրույթներով ֆինանսական կառավարման նոր լուծումները կապիտալի կառուցվածքի կանխատեսման, ֆինանսական քաղաքականության շրջանակներում կայունության ապահովմոն, իրացվելիության և վճարունակության փոխկապակցության ներդաշնակեցման, դրամական հոսքերի կառավարման արդյունավետության բարելավման, անվճարունակության ռիսկի կանխատեսման, ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման, առևտրային կազմակերպությունների պետական աջակցության ու օժանդակության հիմնախնդիրների կարգավորման համար առկա է նոր հայեցակարգային լուծումների, արդյունավետ մոտեցումների մշակման ու դրանց գործնական կիրառման անհրաժեշտություն, որոնք էլ պայմանավորել են սույն հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է միջազգային և ՀՀ-ում կուտակված փորձի հիման վրա ուսումնասիրել հայրենական առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման ընդհանուր վիճակը և կապիտալի նախընտրելի կառուցվածքի որոշման համատեքստում առաջարկել կանխատեսման արդյունավետ լուծումներ ու կատարելագործման ուղիներ: Դրված նպատակի իրականացման համար ատենախոսությունում տարանջատվել և լուծումներ են ստացել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ֆինանսական կառավարման էվոլյուցիան, հիմնարար հիմնադրույթները, տալ ֆինանսական կառավարման հայեցակարգի զարգացման փուլերի համեմատականը և վեր հանել առանցքային շեշտադրումները,
- Ուսումնասիրել կապիտալի կառուցվածքի ձևավորման տեսական մեթոդաբանական մոտեցումները,

- Իրավիճակային լուծումների տեսանկյունից պարզաբանել կազմակերպության կապիտալի նախընտրելի կառուցվածքի ֆինանսական կառավարման գործնական մեթոդաբանական մոտեցումները,
- Առաջարկել կապիտալի նախընտրելի կառուցվածքի կանխատեսման լուծումներ.
- Մշակել ՀՀ իրական հատվածի առևտրային կազմակերպություններում ընթացիկ ակտիվների կառավարման բարելավման մոտեցում,
- Առաջարկել ՀՀ առևտրային կազմակերպություններում անվճարունակության ռիսկի կանխատեսման նոր լուծումներ;

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության օբյեկտ են ուսումնասիրված իրական հատվածի առևտրային կազմակերպությունները: Հետազոտության առարկան իրական հատվածի առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման համակարգի կատարելագործման գործընթացի բարելավման առկա հիմնահարցերն են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում ստացվել են մի շարք գիտական արդյունքներ, որոնցից նորույթ են.

- Կապիտալի կառուցվածքի վարքագծային և ազդանշանային տեսությունների կատարելագործման համատեքստում մշակվել է ուսուցանման կանխատեսման ամբողջական մոդել, ըստ որի՝

- Առաջին մոդելով պատահական թեստավորվող ցանկացած առևտրային կազմակերպության համար որոշվում են պասիվների ընտրված բաղադրիչների՝ սեփական կապիտալ, երկարաժամկետ վարկեր և փոխառություններ, կարճաժամկետ վարկեր և փոխառություններ, գնումների գծով կրեդիտորական պարտքեր, ստացված կանխավճարներ (P_1-P_5 հնգյակ) կառուցվածքի վերին և ստորին սահմանները,
- Երկրորդ մոդելով կանխատեսվում է պասիվների նախընտրելի կառուցվածքի հետ կապի տեսանկյունից տնտեսական շահութաբերությունը ,
- Երրորդ մոդելով սեփական ընթացիկ ակտիվների և իրացվելիության դինամիկ ֆինանսական կառավարման նպատակով կանխատեսվում են ընթացիկ ակտիվների և պասիվների նախընտրելի բաղադրիչները:

- ՀՀ առևտրային կազմակերպություններում ֆինանսական կայունությունը համակողմանի գնահատելու նպատակով առաջարկվել է պարտքային բեռը գնահատող ցուցանիշների 3 խումբ՝ (կապիտալի կառուցվածքի, ակտիվներով պարտավորությունների ապահովվածության, պարտքի սպասարկման) և որոշվել են դրանց վերահսկողության սահմանային միջակայքերը:
- «Ֆինանսական կայունություն և վճարունակություն» կապի համատեքստում մշակվել է հաշվեկշռի կառուցվածքի գնահատման այլընտրանքային մոտեցում, ըստ որի, կոնկրետ կազմակերպության համար որոշվում է սեփական կապիտալի

սահմանային մեծությունը և կառավարչական որոշումների տեսանկյունից գնահատվում է կապիտալի կառուցվածքը:

- Վճարունակության գնահատման մեթոդների կատարելագործման շրջանակներում կառուցվել է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության ցուցանիշների աճի տեմպերը հաշվի առնող ներքին վերահսկողության մոտեցում, որով գնահատվել է ՀՀ առևտրային կազմակերպություններում վճարունակության կառավարումը:
- Առևտրային կազմակերպություններում ճեպընթաց վերլուծության համար մշակվել է իրացվելիության ախտորոշման ու հաշվեկշռի վերակառուցման այլընտրանքային մոտեցում:
- Հիմնվելով ուսուցանման կանխատեսման ամփոփ մոդելի արդյունքների վրա ներքին վերահսկողության կատարելագործման և կառավարչական որոշումների կայացման բարելավման նպատակով մշակվել են պարտքային բեռի գնահատման, վճարունակության և իրացվելիության ընտրված ցուցանիշների միջև փոխկապակցությունը գնահատող մոտեցումներ, որոնց շրջանակներում որոշվել են իրացվելիության և վճարունակության, ֆինանսական կայունության և վճարունակության, ներդաշնակեցման միջակայքերը:
- Առևտրային կազմակերպությունների սնանկության հավանական վտանգի գնահատման արդյունքներով առաջարկվել է անվճարունակության ռիսկի ներքին վերահսկողության ֆինանսական քարտեզ և կառուցվել են կանխատեսման Logit-ռեգրեսիոն վերլուծության վրա հիմնված 2 մոդել, որոնցով գնահատվում է և ֆինանսական ռիսկի, և դրամական հոսքերի ցուցանիշների տեսանկյունից անվճարունակության ռիսկը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության հիմնական արդյունքները կարող են իրենց տեսական և գործնական կիրառությունը գտնել ՀՀ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման համակարգի ու դրան առնչվող գործընթացների կատարելագործման առաջնահերթ ուղիները կանխորոշելու, կապիտալի վարքագծային տեսության շրջանակներում կազմակերպության կապիտալի կառուցվածքն օպտիմալացնելու, ֆինանսական քաղաքականության շրջանակներում կայունության, իրացվելիության և վճարունակության փոխկապակցությունը ներդաշնակեցնելու, անվճարունակության ռիսկը կանխատեսելու, պետական աջակցության ու օժանդակության մոտեցումների ու մեխանիզմների առաջադրման գործընթացում: Ստացված արդյունքները, առաջարկված լուծումներն էապես կնպաստեն հայրենական առևտրային կազմակերպությունների առկա ճգնաժամային վիճակը հաղթահարելուն:

Հետազոտության մեջ կատարված առաջարկությունները, գործնականում փորձարկված, մշակված մոտեցումները նպատակային ձևով կարող են ծառայել

կոնկրետ առևտրային կազմակերպության կապիտալի կառուցվածքի ուսուցանման մոդելով կանխատեսման միջոցով ֆինանսական վիճակի կայունության ամրապնդմանը, իրացվելիության և վճարունակության փոխկապակցության վերահսկողության բարելավմանը, ինչպես նաև հակաճգնաժամային կառավարման գործընթացի նկատմամբ հատուկ վերաբերմունքի ձևավորմանը, ինչը խիստ էական նշանակություն ստացավ կորոնավիրուսի համավարակի պայմաններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 369 էջ՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դոկտորական ատենախոսության ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորույթն ու դրա գիտագործնական նշանակությունը, կիրառման հնարավոր ուղղությունները և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական կառավարման էվոլուցիան և հիմնարար հիմանդրույթները» գլխում քննարկվել են ֆինանսական կառավարման հայեցակարգի զարգացման փուլերը և տրվել է դրանց համեմատական բնութագիրը: Առանցքային են համարվել ֆինանսական կառավարման հիմնարար հիմնադրույթները և դրված խնդրի շրջանակներում հեղինակի կողմից ներկայացվել են դրանց հիմնական շեշտադրումները:

Հեղինակի կողմից ֆինանսական կառավարման հիմնարար հիմնադրույթներից կարևորվել են դրամական միջոցների հոսքերի, փողի ժամանակային արժեքի, ռիսկի և եկամտաբերության միջև փոխհամաձայնության, կապիտալի արժեքի, շուկայի արդյունավետության, տեղեկատվական անհամաչափության, գործակալային հարաբերությունների և այլընտրանքային ծախսերի հիմնադրույթները: Դրանց հետ մեկտեղ ժամանակակից ֆինանսական կառավարումը հիմնվում է բազմաթիվ գիտական ու տեսական եզրակացությունների հիման վրա՝ արտացոլելով կազմակերպության ֆինանսական կառավարման մեխանիզմների ու ֆինանսական շուկայի գործիքների հետ սերտ կապը:

Ատենախոսության երկրորդ՝ «Կազմակերպության կապիտալի նախընտրելի կառուցվածքի ձևավորման գործընթացը ֆինանսական կառավարման տեսական և գործնական խնդիրների համատեքստում» գլխում հեղինակը ներկայացրել է մասնագիտական գրականությունում նշանակություն

ստացած կապիտալի կառուցվածքի ձևավորման տեսական մեթոդաբանական հիմքերը, կատարել է դրանց համեմատական վերլուծություն, քննարկել է առևտրային կազմակերպության կապիտալի նախընտրելի կառուցվածքի ֆինանսական կառավարման գործնական մեթոդաբանական մոտեցումները ու կառուցել առևտրային կազմակերպություններում ընթացիկ ակտիվների և պասիվների նախընտրելի հարաբերակցության կանխատեսման համալիր մոտեցում:

Ատենախոսության երրորդ «Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման ժամանակակից մոտեցումները կայունություն-վճարունակություն – իրացվելիություն կապում» գլխում ներկայացվել և քննարկվել են առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման տեսամեթոդական հիմքերը և գնահատման, վճարունակության և իրացվելիության ֆինանսական կառավարման ժամանակակից մոտեցումները: Հեղինակի կողմից կիրառվել են ժամանակային փուլերի տեսանկյունից հետազոտված առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության, վճարունակության և իրացվելիության գնահատման մոտեցումներ և առաջարկել դրամական հոսքերի, դեբիտորական պարտքերի արդյունավետ կառավարման հետ նոր լուծումներ: Ֆինանսական կառավարման կատարելագործման տեսանկյունից կապիտալի նախընտրելի կառուցվածքի կապի համատեքստում հեղինակն առաջարկել է այլընտրանքային լուծման ուղիներ, որոնք կօժանդակեն ֆինանսական կայունության, վճարունակության, իրացվելիության գնահատման և ներքին վերահսկողության գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության չորրորդ «Ֆինանսական կառավարման կատարելագործման ուղիները կապիտալի նախընտրելի կառուցվածքի կանխատեսման համատեքստում» գլխում հիմք ընդունելով նախորդ գլուխներում զարգացրած տեսակետները, հեղինակն առաջարկել է առևտրային կազմակերպության իրացվելիության և վճարունակության գնահատման ցուցանիշների սահմանային միջակայքերի ներդաշնակեցման կանխատեսման, ֆինանսական կայունության և վճարունակության գնահատման ցուցանիշների սահմանային միջակայքերի փոխկապակցության կանխատեսման մոտեցումներ, ֆինանսական կառավարման համակարգում ընթացիկ ակտիվների կատարելագործման ուղիներ և անվճարունակությաան ռիսկի գնահատման կատարելագործման մոտեցում: Միջճյուղային վիճակագրական տեղեկատվության առկայության դեպքում՝ ըստ հեղինակի դիրքորոշման, առաջարկված իրացվելիություն-վճարունակություն փոխկապակցության ներդաշնակեցման միջակայքերը հնարավոր է որոշել տվյալ ճյուղի համար, ինչն էլ ուղենշային կլինի տվյալ ճյուղին պատկանող կազմակերպությունների իրացվելիություն-վճարունակություն կապը վերահսկելիս: Միաժամանակ կանխատեսման մոտեցումը հնարավորություն է ընձեռել լուծել ֆինանսական քաղաքականության արդյունավետությանը խոչընդոտող կարևոր խնդիրներից մեկը, այն է՝

իրացվելիության և վճարունակության փոխկապակցված վերահսկողության իրականացումը կապիտալի նախընտրելի կառուցվածքի դեպքում՝ միաժամանակ ներդաշնակեցնելով ներքին վերահսկողության խնդիրները ընտրված գնահատող ցուցանիշների ընդհանուր սահմանային միջակայքերի փնտրման շրջանակներում:

Ատենախոսության չորրորդ գլխում կանխատեսման մոտեցումների համար կառուցվել են ռեգրեսիոն հավասարումներ և դրանց հիման վրա համակարգվել են կազմակերպության վճարունակության միջակայքերը:

Եզրակացությունների բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բազմաթիվ դրական արժանիքներով հանդերձ, գրախոսվող ատենախոսությունում նկատվել են հետևյալ թերությունները.

1. Ներկայացված երրորդ և չորրորդ նորույթները միմյանցից բխող են, և մեր կարծիքով, դրանք կարելի է միավորել և ներկայացնել մեկ նորույթի առաջարկով:
2. Աշխատանքում կատարվել են վերլուծություններ, սակայն կարծում ենք, այն կշահեր, եթե ավելի խոր ուսումնասիրվեին և ներկայացվեին առաջարկություններ ՀՀ ում գործող ավտրային կազմակերպությունների դեբիտորական պարտքերի ժամանակային վերահսկողության տեսակետից:
3. Հեղինակի կողմից որպես գիտական նորույթ ներկայացված այս դրույթը՝ «... ՀՀ առևտրային կազմակերպություններում ֆինանսական կայունությունը համակողմանի գնահատելու նպատակով առաջարկվել է պարտքային բեռը գնահատող ցուցանիշների 3 խումբ՝ (կապիտալի կառուցվածքի, ակտիվներով պարտավորությունների ապահովվածության, պարտքի սպասարկման) և որոշվել են դրանց վերահսկողության սահմանային միջակայքերը...», լրացուցիչ հիմնավորման կարիք ուներ: Մասնավորապես, հստակ չէ այն հարցի պատասխանը, թե ինչով է պայմանավորված ընտրված երեք խումբ ցուցանիշների նպատակահարմարությունը:
4. Աշխատանքում կատարված է ընտրանք, որը առավել ցայտուն երևում է «Կապիտալի կառուցվածքի բաղադրիչների միջև փոխհարաբերությունները բնութագրող ցուցանիշները» (2.2 ենթահարցում, աղյուսակ 2.2.2), սակայն առկա չէ ընտրանքի ձևավորման մեթոդը: Պարզ չէ, թե, ո՞ր կազմակերպություններն են ընտրված կամ ի՞նչ մեթոդով կամ մոտեցմամբ է կատարված ընտրանքը:
5. Ատենախոսության 2.2. ենթահարցում բերված աղյուսակ 2.2.16-ում՝ Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ում գործառնական շահույթի ստանդարտ շեղման հաշվարկում հաշվարկել է EBIT եկամտաբերության

վերլուծության մեթոդով, սակայն մենք կարծում ենք, որ տեղին կլիներ, որ նաև դիտարկված լիներ EBITDA մեթոդը, որում կարևոր է նաև մաշվածության և արժեզրկման ազդեցությունը:

6. Ատենախոսության 4.1 ենթահարցում հեղինակը Երևանի Շամպայն գինիների գործարան ԲԲԸ-ի համար կատարված գնահատումների հիման վրա ֆինանսական կառավարման ու ֆինանսական քաղաքականության հարմոնացման տեսանկյունից արձանագրել է կապիտալի կառուցվածքի բարելավման խնդիր, որոշել վերահսկողության ընդհանուր գոտիներ, որպեսզի ֆինանսական դրության կարևոր բաղադրիչներ՝ իրացվելիությունը և վճարունակությունը վերահսկվեն ոչ թե տարանջատված, այլ փոխկապակցված: Կարծում ենք, որ այս առաջարկը ավելի մանրամասնելու կարիք ուներ:
7. ՀՀ առևտրային կազմակերպությունների համար անվճարունակության և սնանկության հավանական ռիսկի համալիր մոտեցման մշակման համար հեղինակի կողմից տարանջատվել են փուլեր, որոնցում որպես արտաքին գործոններ դիտարկված են նաև դրամային բազմարկիչը և M1 դրամական զանգվածի ագրեգատը: Կարծում ենք, որ ընտրված մակրոտնտեսական այս գործոնների ազդեցությունը առևտրային կազմակերպությունների անվճարունակության ռիսկի վրա լրացուցիչ մեկնաբանման կարիք ուներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հարկ է նշել, որ գրախոսվող դոկտորական ատենախոսության հիմնական արժանիքներից մեկը հեղինակի կողմից առևտրային կամակերպությունների ֆինանսական կառավարման կատարելագործմանն ուղղված մեթոդաբանական նոր լուծումներն են: Նշված դիտողությունները չեն նվազեցնում դոկտորական ատենախոսության արդյունքների տեամեթոդաբանական և գիտագործնական նշանակությունը:

Խաչատուր Լևոնի Բաբոյանի դոկտորական ատենախոսությունն ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը խիստ կարևոր են ու արդիական իրական հատվածի առևտրային կազմակերպությունների ֆինանսական դրության արդյունավետ վերահսկողության համար:

Ատենախոսը դրսևորել է տեսական և գործնական խորը մասնագիտական գիտելիքներ, վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Մշակված

մոտեցումները և կատարված առաջարկություններ հաջողությամբ կարող են կիրառվել առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարման խնդիրներ առավել արդյունավետ լուծելու նպատակով:

Ատենախոսության հարցերի և ստացված արդյունքների հիմնադրույթներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած երեք մենագրություններում, գիտական 17 հոդվածներում, որոնցից վեցը տպագրվել է SCOPUS և Web of Science ինդեքսավորվող ամսագրերում:

Խաչատուր Լևոնի Բաբոյանի «Առևտրային կազմակերպություններում ֆինանսական կառավարման կատարելագործման ուղիները (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությանը, բավարարում է դոկտորական ատենախոսություններին ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 8-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ **Մ. Հ. Ոսկանյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Կառավարման և բիզնեսի
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Ա.Մ. Սուվարյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի դոցենտ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Հ.Հ. Հանիսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
Կառավարման և բիզնեսի ամբիոնի դոցենտ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Մ.Բ. Մոմջյան**

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**